ւոր արեւելք եւ նայում են ամայացած դաշտերին եւ նայում են բարձրաբերձ լեռների վրայից սահող ամպերին։

Ցիշում եմ՝ ինչպէս յանկարծ ձեղունի վրայ նկարուած թռչունները վայր ընկան, ու Տուղրիլ եւ Ալփասլան, Զինկիզ եւ Ուխաթա խան մեր քրոնիկագրերի լալկան էջերից վեր բարձրացան եւ կատաղօրէն ասպատակեցին սարսափի դաշտերում եւ ահի ձորերում։

Զարմաղա՛ն զօրապետ։

Բաչո՛ւ զօրապետ։

Թէմուրլէ՛նկ։

Իսկ պօրֆիրէ երեք դունդստապլները ձերմակ ձիերի վրայ նստած՝ մէկի անունն էր Վրվէռ, միւսինը՝ Փառուստոս եւ երրորդինը՝ Շապուհ՝ անցնում էին Սիսի փողոցներից, ուր զանազան ազգերից կազմուած ամբոխը՝ ջենովացիներ եւ վենետիկցիներ, սիկիլիացիք եւ բիւզանդացիք, արաբ, ածղան եւ ասորիք՝ նայում է նրանց վրայ հիացմունքով, պատմում նրանց քաջագործութիւնները ու զարմանում նրանց չքեղութեան ու հարստութեան վրայ։

Կիլիկիան ամբողջութեամբ ոսկի է եւ արիւն։

Կիզիչ արեւ եւ փարթամ բուսականութիւն՝ դաշտերում. կապտաւուն ձիւն եւ յաղթանդամ կորիճներ՝ լեռների կողին։

Բերդ, լուսին, թագուհի։

Ֆիորենցիայի ոսկիներով զարդարուած կտաւները, վենետիկեան ապակին եւ քանդակուած փայտը, Արաբիոյ խալիները, Զինաստանի մետաքսը, ունիտորների լատիներէնը, դերման թագաւորի նուէրները, Ջենովայի եւ Սիկիլիայի թուրերը եւ զէնքերը, ֆրանսական թագաւորական զգեստները ու Ներսէս Շնորհալին եւ Մխիթար Գոշը...

Ու գլխիս մէջ պօէմի նման երգում են երեք հայերի երեք ձայները։

Ես, Վրվէռ դունդստապլ,

Հաւատարիմ թագաւորիս եւ հաւատարիմ Ցիսուսին,

Թուր զարկի թաթարների դէմ,

Պաշարեցի բերդեր

Ու վայր ընկայ Երուսաղէմի ճամբին՝

Աղօթարար եւ արիւնաթաթախ։

Ես Փառուստոս Գունդստապլ,

Թագուհու համար նրա մեծ վառվռուն աչքերի համար, նրա դալուկ դէմքի համար,

Գնացի աշխարհն արաբների,

Կռուեցի,

Ֆրանքների մօտ մարքիզ տիտղոսը առի

Եւ վայր ընկայ Երուսաղէմի ճամբին՝

Աղօթարար եւ արիւնաթաթախ։

Ես, Շապուհ գունդստապլ,

Ցունաց դէմ պատնէշ կանգնեցի,

Սպաննեցի հազար եւ հինգ հարիւր,

Բերդեր առի

Թագաւորիս համար,

Գանձեր բերի թագաւորիս համար

Եւ գերիներ բազում —

Եւ վայր ընկայ Երուսաղէմի ճամբին՝

Աղօթարար եւ արիւնաթաթախ։

Հիմա, պորֆիրէ մարմինով կանգնել ու նայում են։ Իսկ այնտեղ Ս. Ղազարի վանքում, փոքրիկ խուցերի մէջ նստած, երկայն մօրուքով վարդապետներ, ոսկեգօծ ձեռագիրների մէջ, վառուած մանրանկարների շուրջը, կարդում են ահաւոր դէպքեր, ու նոյնպէս, կանգնում ու նայում են։ Նայում են հեռուն, ուր ամայի դաշտերի եւ ամայի լեռների վրայ, աշունը եւ իր քամին, խենթացած պար են բռնում, պտոյտ գալիս եւ երեք գունդստապլների նման վայր ընկնում Երուսաղէմի ճամբին, աղօթարար եւ արիւնաթաթախ։

Ո՞ւր են իշխանները հայոց։

Աշխարհի բոլոր անկիւններում գրաբար տապանագիրներ կան։ Մաշուած քարեր, բարդ զարդերով, կրճատուած բառերով, ձէթի լամպարի նման հազիւ վառուող ածականներով։

Անին եւ Սիսը լռում են բոլոր հողերի տակ։ Ու բոլոր հողերի տակ լռում է մեր հոգին։ Բոլոր քարերից նայում է մեր հոգին։

Եւ մենք վախում ենք նրան նայել։

* * *

— Կարելի՞ է։

Դուռը բացուեց եւ ծփող արծաթէ, ասորական մի մօրուք լեցրեց սենեակը։

Հայ մատենագրության թուանշանային գրադարան